Նախագիծ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» նոյեմբերի 2009 թ. N---Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀԽՍՀ ԳԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999թ. օգոստոսի 31-ի N551 որոշումը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գալուստ Գալոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Դեմիրճյան փողոցի 17-րդ շենքի շքամուտքի պատին փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող
աշխատանքների, առողջապահության, սոցիալական
պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ա. Ասատրյան

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԽՍՀ ԳԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում պետական-հասարակական ականավոր գործիչ, մեծավաստակ գիտնական, տաղանդաշատ պատմաբան, գիտության հիանալի կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի պատմաբան /1963-1979/, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար /1971-1982թթ./, ՀԽՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ /1982-1988թթ./ և ՀԿԿ Կենտկոմի քարտուղար /1988-1991թթ./ Գալուստ Գալոյանի /1927-2003թթ./ վաստակը։

Ինչպես նաև հաշվի է առնվում ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի /21.02.2007թ./ միջնորդությունը ականավոր գիտնականի հիշատակը հավերժացնելու համար։

Հարցը քննարկվել է կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի 2009թ. հոկտեմբերի 29-ի նիստում և քվեարկվել միաձայն /կողմ՝ 11, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա/։

**Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝** **Ա. Ասատրյան**